

Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա ՓԲԸ 2014թ.
տարեկան ֆինանսական վերլուծություն

Ընկերությունը հիմնադրվել է 2012թ. մայիսի 18-ին: Նույն թվականի հուլիսի 10-ին Ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկից ստացել է գործունեության իրականացման հետևյալ լիցենզիաներ:

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը.
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը.
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրումը հաճախորդներին.
- արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացումը:

Ընկերության միջնաժամկետ նպատակն է ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտում առաջատար ֆինանսական հաստատության կառուցումը, որը կմատուցի բարձրորակ ծառայություններ ու հնարավորություն կտա տեղական շուկայի մասնակիցներին աշխատել միջազգային ֆինանսական շուկաներում շրջանառվող գործիքների լայն տեսականու հետ:

Ընկերությունը մասնավորապես նպատակ ունի՝

- կիրառել նոր մոտեցումներ և մատուցել բարձրորակ ծառայություններ,
- մշակել և առաջարկել ֆինանսական գործիքների լայն տեսականի,
- ստեղծել սեփական վերլուծական կենտրոն և հաճախորդներին տրամադրել խորհրդատվություն,
- միջազգային ֆինանսական շուկաներում մասնակցության հնարավորություն ընձեռելով՝ աջակցել հաճախորդների բարեկեցության բարձրացմանը,
- զբաղեցնել առաջատար դիրքեր ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտում,
- բարձրացնել Ընկերության կապիտալի օգտագործման արդյունավետությունը,

ձևավորել ավանդույթներ ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտում:

2014թ. Ընկերությունը շարունակել է իր համագործակցությունը «ԴիՖ Բրոքեր» պորտուգալական բրոքերային ընկերության հետ, որի միջոցով Ընկերության հաճախորդներին հնարավորություն է ընձեռնվել արժեթղթերով գործարքներ իրականացնել միջազգային ֆոնդային շուկաներում:

2014թ. Ընկերությունը նաև WLP պայմանագիր էր ստորագրել շվեյցարական «Դուքասքոփի» բանկի հետ, որի միջոցով ՖինԼաբ ընկերությունը պետք է տրամադրեր բարձրորակ ծառայություններ նաև Ֆորեքս շուկայում:

2013 թվականին Ընկերությունը անցկացրել է փորձնական մեկ դասընթաց «Հավանականությունների տեսություն, վիճակագրություն և էկոնոմետրիկա

թեմայով»: 2014թ-ին Ընկերության կողմից անցկացվել են մեծ քանակով անվճար դասընթացներ բրոքերային ծառայությունների գծով:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶԱՑՈՒՄԸ

2014թ.-ի սկզբին Ընկերության ընդհանուր կապիտալը կազմել էր 50 019 հազ. դրամ, իսկ տարվա վերջին՝ 50 288 հազ. դրամ:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բրոքերային ծառայություն

Ընկերությունը «ԴիՖ Բրոքեր» պորտուգալական բրոքերային ընկերության միջոցով Ընկերության հաճախորդներին հնարավորություններ է տրամադրում միջազգային ֆինանսական շուկաներում ուղղակի և ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարել ինչպես կապի տարբեր միջոցներով պատվերների ընդունմամբ, այնպես էլ Ընկերության գրասենյակի տարածքում հատկացված հարթակների միջոցով: Ընկերությունը բրոքերային ծառայություններ է մտացուցում ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ հաճախորդներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարել հայրենական և միջազգային ֆինանսական շուկաների այնպիսի գործիքներում, ինչպիսիք են պետական և կորպորատիվ պարտատոմսերն ու բաժնետոմսերը, ածանցյալ գործիքները, ֆոնդերի մասնաբաժինները և այլն:

Ընկերությունը կնքել է նաև պայմանագիր «Դուքասքոփի» շվեյցարական բանկի հետ, որի արդյունքում ակնկալվում էր ընդլայնել բրոքերային ծառայությունների շրջանակը և իջեցնել այդ ծառայությունների (Ֆորեքս և CFD շուկայում) սակագները:

2014թ.-ին փաստացի իրականացված բրոքերային գործարքների ընդհանուր ծավալը ԴիՖբրոքեր ընկերության միջոցով կազմել էր ավելի քան 3.9 մլն. ԱՄՆ դոլար, որից գերակշռող մասը CFD շուկայում, իսկ մնացածը արժեթղթերի և Ֆորեքս շուկաներում: Դուքասքոփի բանկի միջոցով գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 1.3 մլն. ԱՄՆ դոլար:

Դիլինգ կենտրոն

2012թ. դեկտեմբերին Ընկերությունը բացել էր Դիլինգային կենտրոն, որտեղ Ընկերության հաճախորդները կարող են իրականացնել արժեթղթերով գործառնություններ Ընկերության տարածքում՝ ցանկության դեպքում օգտվելով Ընկերության մասնագետների խորհրդատվությունից: Դիլինգ կենտրոնը նախատեսված է 9 հաճախորդի համար և հագեցված է համապատասխան առևտրային հարթակ ունեցող համակարգիչներով: 2014թ. ընթացքում Ընկերության դիլինգային կենտրոնից օգտվել են երկու հաճախորդ:

Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում

Ընկերությունը 2014թ. բանակցություններ է վարել մեկ խոշոր ընկերության հետ՝ արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման հարցի շուրջ, սակայն որոշակի արդյունքներ չեն գրանցվել:

Խորհրդատվություն

2014թ. ընթացքում Ընկերությունը մատուցել է խորհրդատվություն արժեթղթերի հետ կապված , ընդհանուր 2'350'000 դրամ ծավալով:

Սեփական գործարքներ

2014թ.-ին Ընկերությունը սեփական միջոցներով իրականացրել է հետևյալ գործարքները.

CFD շուկայում մոտ 3.8 մլն. ԱՄՆ դոլլարի գործարքներ, իսկ Ֆորեքս շուկայում մոտ 31.3 մլն. ԱՄՆ դոլլարի գործարքներ:

Ընկերության կողմից ռեպո գործարքներ 2014 թ. չեն իրականացվել:

Ոչ հիմնական ծառայություններ

Ընկերությունը հաճախորդներին մատուցում է տարբեր խորհրդատվական ծառայություններ, ինչպիսիք են՝

- Խորհրդատվություն արժեթղթերի շուկայում կապիտալի ներդրման վերաբերյալ
- Խորհրդատվություն բաժնետերերի ընդհանուր ժողովներ անցկացնելու վերաբերյալ
- Խորհրդատվություն բաժնետիրական ընկերության մասին տվյալներ հրապարակելու վերաբերյալ
- Խորհրդատվություն բաժնետիրական ընկերությունների արժեթղթերը գրանցելու վերաբերյալ
- Խորհրդատվություն բաժնետիրական կապիտալի կառավարման վերաբերյալ
- Խորհրդատվություն գնագոյացման վերաբերյալ
- Խորհրդատվություն կանոնադրական կապիտալը փոխելու վերաբերյալ
- Խորհրդատվություն կորպորատիվ կառավարման վերաբերյալ
- Խորհրդատվություն համատեղ ձեռնարկություններ բացելու վերաբերյալ
- Խորհրդատվություն ձեռնարկությունների կողմից բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և օտարման վերաբերյալ
- Խորհրդատվություն ներդրումային նախագծեր պատրաստելու և իրականացնելու վերաբերյալ
- Խորհրդատվություն ֆինանսական շուկայում կապիտալի ներդրման վերաբերյալ
- Խորհրդատվություն ֆինանսավորման աղբյուրների որոնման և ներդրումներ ներգրավելու վերաբերյալ

Ընկերությունը մատուցում է հետևյալ միջնորդական ծառայությունները

- Միջնորդություն արտասահմանյան ներդրումներ ներգրավելու գործում

- Միջնորդություն հասարակական կազմակերպությունների համար ֆինանսական միջոցներ ներգրավելու գործում (ֆանդրայզինգ)
- Միջնորդություն ներդրումային ծրագրերի պատրաստման և իրականացման գործում

Ընկերությունն իրականացնում է նաև արժեթղթերի շուկայական արժեքի և ներդրումային նախագծերի գնահատում, ֆինանսական շուկաների վերլուծություն:

Բացի այդ, Ընկերությունն ունեցել է մի քանի հանդիպում տարբեր նախագծերում արտասահմանյան ներդրումներ ներգրավելու հարցում:

Ուսումնական կենտրոն

2014թ-ին Ընկերությունը անցկացրեժ մեժ թվով անվճար դասընթացներ բրոքերային ծառայությունների գծով:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2014թ. հիմնական եկամուտները Ընկերությունը ձևավորել է տրամադրված խորհրդատվություններից, սեփական գործարքներից և արտարժույթի վերագնահատումից: Նշված հոդվածներով ստացված եկամուտը կազմել է 2'350'000 դրամ խորհրդատվություններից, 14'056'309 դրամ՝ արտարժույթի առք ու վաճառքից և 4'157'866 դրամ՝ արտարժույթի վերագնահատումից: Բրոքերային ծառայություններից ստացված եկամուտը կազմել է ընդհամենը 240 հազար դրամ:

Ընկերության ծախսային մեժ հոդվածներից են վարձակալության և աշխատավարձային հոդվածները, որոնք 2014թ. վերջի դրությամբ կազմել են համապատասխանաբար 10'007'000 և 28'891'000 դրամ: Ընկերությունը 2014թ. փակել է 29'741'000 դրամ վնասով:

2014թ. ընթանցքում կատարվել են ծախսերի կրճատման գործընթացներ: Ընկերությունը վարձակալել է նոր տարածք, որի արդյունքում տարեկան կտրվածքով խնայվել էր մոտ 11 մլն. դրամ: Նվազեցվել էր նաև աշխատավարձային ֆոնդը մոտ 8 մլն. դրամով: